ΓΕΝΙΚΗ ΑΡΜΕΝΙΚΗ ΕΝΩΣΗ ΑΓΑΘΟΕΡΓΙΑΣ
ΣΩΜΑΤΕΙΟ ΑΝΕΓΝΩΡΙΣΜΕΝΟ ΑΡΙΘ. 6230/1935
ΟΔΟΣ ΝΑΥΠΛΙΟΥ 11 - 17563 - ΠΑΛ.ΦΑΛΗΡΟ
ΔΟΥ: Π.ΦΑΛΗΡΟΥ - ΑΦΜ: 090165050

**ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION**
FOUNDER BOGHOS NUBAR

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ
ՀԻՄՆԱԴԻՐ ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ
ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Թիւ: 3676 — Փ. Ֆալիրօ, 27 Հոկտեմբեր 2010

Մեծյարգոյ
Տիկ. Հրանոյշ Յակոբեան
Նախարար՝
ՀՀ Սփիւռքի Նախարարութեան
Երեւան

Համեստափայլ Տիկ. Հ. Յակոբեան,

Հ. Բ. Ը. Միութեան Յունաստանի Կեդրոնական Յանձնաժողովի Վարչութիւնը իր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ, "Ա. Գալփաքեան" Վարժարանիս տասնեակ մը աշակերտներու եւ իրենց առաջնորդ ուսուցչուհիներու, մասնակցութեան համար, Ձեր կողմէ նախաձեռնուած "Արի Տուն" շնորհալի ծրագրին: Անոնք ծանօթացան, վայելեցին եւ հպարտացան մեր հայրենիքի՝ Հայաստանի դարաւոր պատմութեամբ ու փառաւոր մշակոյթով: Հայրենի հողին վրայ, իրենց ընծայուած բացառիկ ապրումները, վստահ ենք պիտի ազդեն որպէսզի վերածուին հայկական շունչ ու ոգի տարածող առաքեալներու:

Սոյն առիթով կը շնորհաւորենք նորաստեղծ նախարարութեանդ, յարաբերաբար կարճ ժամանակամիջոցի ընթացքին, նշանակած վիթխարի եւ բարձրորակ գործունէութիւնը:

Ընդունեցէք՝ նորանոր ու արդիւնաշատ յաջողութիւններու մեր ջերմ մաղթանքները:

Մնամք Ձերդ ու յարգանօք՝

Ի դիմաց
Հ. Բ. Ը. Միութեան
Յունաստանի Կեդր. Յանձնաժողովի

Ատենադպիր
Գ. Ռուստեմեան

Ատենապետ
Տ. Ապասեան

ag/3676/271010

ΤΑΧΥΔΡ. Δ/ΝΣΗ: ΤΑΧ. ΘΥΡ. 77215 - 17510 - ΠΑΛ.ΦΑΛΗΡΟ ΤΗΛ: 210 9825685 FAX: 210 9850973
POSTAL ADDRESS:P. O. BOX 77215 - GR 17510 - PAL. FALIRO - GREECE TEL: +30 210 9825685 FAX: +30 210 985097
e-mail: agbuath@windowslive.com